ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

Օրակարգում

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ, դոցենտ Ա.Ս.Գալստյան – Հարգելի գործընկերներ գիտխորհրդի թվով 5-րդ նիստի օրակարգը ծանոթ է բոլորիդ: Ըստ օրակարգի՝ լսում ենք մեթոդ խորհրդի նախագահի հաղորդումը՝ 2024-2025թ կատարած աշխատանքների և ծրագրային փոփոխությունների վերաբերյալ:

Մեթոդ խորհրդի նախագահ, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի հաշվետվությունը կցվում է:

Ելույթից հետո զեկուցողին ուղղեցին հետևյալ հարցերը .

-Ինչ ծրագրային փոփոխություններ են կատարվել

Կ.Ռ.Գրիգորյան- 2024-2025 ուստարում, Ծրագրային փոփոխություններ են կատարվել քիմիա բակալավրի, քիմիա մագիստրոսական, Սննդի անվտանգություն բակալավրի և մագիստրոսական ծրագրերիում, այժմ սպասում ենք ծրագրերի հետադարաձ պատասխանին: Նյութագիտություն մասգիստրոսական ծրագրի համար փոփոխություններ չկան, այն բավարարում է ժամանակակից մարտավարության պահանջներին:

-Ինչ քննարկումներ են կատարվել մեթոդ խորհրդում ավարտական և մագիստրոսական աշխատանքների չափորոշիչների հստակեցման համար:

Կ.Ռ.Գրիգորյան- Այս աշխատանքը բավականին լուրջ է, մենք ներկայացրել ենք ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի կողմից մշակված չափորոշիչները, որպեսզի հիմք ունենանք հետագա քննարկումների համար:

Նիստի նախագահ Ա.Գալստյան- Այո, այդ նախնական տարբերակը ուղարկվել է գիտխորհրդի անդամների, սակայն դա ոչ թե չափորոշիչ է, այլ աշխատանքի էջերի սահմանում: Չափորոշիչ ասելով պետք է ճշտենք փորձերի քանակը, տիպերը՝ օրինակ սինթեզվել են երեք նոր նյութ, ռեակցիայի տարման համար մշակվել են օպտիմալ պայմաններ՝ փոխվել են լուծիչները, ջերմաստիճանը: Իսկ եթե աշխատանքը նորույթ չի, այլ ուղակի շարքի համալրում՝ այդ դեպքում ուսանողը կարող է իրականացնել 7-9 նյութերի սինթեզ: Մագիստրոսական թեզերը պետք է պարունակեն անպայման գիտական նորույթ: Հարգելի գործընկերներ, հիմնվելով նման մոտեցման վրա, իրականացրեք քննարկումներ ամբիոններում, մեթոդ խորհրդում և ներկայացրեք ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի չափորոշիչները:

-Ինչպես են կազմակերպվում պրակտիկանները

Ուսանողները իրենք են ընտրում պրակտիկայի վայրը: Քիմիա ԿԾ ուսանողների մեծ մասի համար պրակտիկան կիրականացվի ակադիմիական համակարգի ինստիտուտներում: Սննդի անվտանգության ԿԾ ուսանողների պրակտիկան կանցկացվի ինչպես մասնավոր, այնպես էլ ակադիմիական համակարգի ինստիտուտներում: Պրակտիկայի անցկացման նոր տեղերի համար իրականացվում են բանակցություններ համապատասխան մասնագետների հետ:

Ա.Ս.Գալստյան - Հարգելի գործընկերներ ևս մեկ անգամ հորդորում եմ հստակեցնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի չափորոշիչները: Այդ հարցը կքննարկենք նոյեմբեր ամսվա նիստում:

Ա.Ս.Գալստյան – Մեթոդ խորհրդի նիստում քննարկվում են ուսանողների հարցման արդյունքները:

Կ.Ռ.Գրիգորյանն - Այո քննարկվում են, և այն դեպքերը որտեղ դասախոսը ցածր միավոր է ստացել՝ ապա աշխատում ենք քննարկումը իրականացնել եռաչափ ֆորմատով, դասախոս, ամբիոնի վարիչ և մեթոդ խորհրդի նախագահ:

Ա.Ս.Գալստյան - ինչ կասեք վերջին հարցման ընթացքում ֆիքսված գրառումների վերաբերյալ:

Կ.Ռ.Գրիգորյան- քննարկել ենք ծրագրերի ղեկավարների հետ: Միայն մի եզրակացության հանգեցինք, որ նման կարծիքները ծրագրային խոտանի կամ անուշադրության խնդրի հետևանքով կարող է լինել:

Է.Երիցյան – Ուսանողական խորհուրդը նույնպես անհանգստացած է այդ հարցով: Խոսել ենք առաջին կուսեցիների, երկրորդ կուրսեցիների հետ: Մենք հանգել ենք մի եզրակացության, որ ուսանողները պարզապես, առանց հարցերը կարդալու նշել են հարցաշարի մեջ:

Ա.Ս.Գալստյան- Այժմ անցնենք օրակարգի հաջորդ հարցին: Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությանն է դիմել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյանը՝ առաջին տարվա հայցորդներ՝ Ծովինար Բիլյանի և Արթուր Նիգարյանի թեկնածուական ատենախոսությունների և ղեկավարների հարցի քննարկման համար:

Քննարկումների արդյունքում Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց թեկնածուական ատենախոսությունների վերնագրերի և ղեկավարների հաստատման հարցը ժամանակավորապես հետաձգել, քանի որ առաջարկված ատենախոսությունների վերնագրերը չեն համապատասխանում գիտական ղեկավարին տրված թուլտվության թվանիշին և անհրաժեշտ է համապատասխանեցնել ատենախոսության վերնագիրը ղեկավարին տրված թուլտվության գիտական թվանիշին կամ հակառակը:

Նիստի նախագահ

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ա.Ս.Գալստյան

Նիստի քարտուղար,

Դոցենտ Մ.Ա.Սամվելյան